

76642

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 22

№ 22

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՈՆԵՐԻ, ՃԻԱՑՔԸ

Ա. ՄԱՐՏՈՒՆԻ

# ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՒ

Գլուխ 2 ր. 50 կ.

323.1  
Դ-38

1918

15 JAN 2010  
9, 6 SEP 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՒԹՅԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 22

323.1

Ա-38

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք!

Ա. Խ.

Ա. ՄԱՐՏՈՒՆԻ

# ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՒԹՅԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՄՈՍՔԻ. — 1919



լինում: Այսպէս, «Բագուի Զայնի» թղթակիցը լայտնում է, որ վիթաքանութիւններին, մասնակցած, որքան մենք զիտենք, երկու մարքսիստներից մէկը հարցին մօտեցել է լամենայն դէպս ոչպատշաճ կերպով, իսկ միւսի տեսակէտը այնքան էլ պարզ չէ, թէև նա աւելի մօտ է նշարտութեան: Բայց արի տես, որ «Բագուի Զայնի» խմբագրութիւնը իր կողմից գալիս է հաւաստիացնելու, որ մարքսիստները ազգային հարցին նայել են ոչ-մարքսիստորէն:

Թող խօսի ինքը թերթի խմբագրութիւնը:

«Բագուի Զայնի» սոյն տարվայ № 71-ի խմբագրական յօդուածում, գրված վերոգիշեալ գասախօսութեան առիթով, ի միջի այլոց կարգում ենք. «Տարիներ առաջ—ոռուս ընկերութականների միակողմանի աղդեցութեան տակ—մեր ձախակողմեան երիտասարդութիւնը շատ թեթևամիտ վերաբերմաւնք էր ցոյց տալիս դէպի ազգային խնդիրը, դէպի մայրենի լեզուն. վերացական և բնազանցական տեսակէտներն ազգերի ու լեզուների ապագայ ձուլման մասին՝ մթնեցնում էին գաղափարները և իրական կեանքն անհասկանալի դարձնում: Երուական երկիրները, որոնց քաղաքակրթութիւնն անհամեմատ նուրբ է մերինից, որոնց սօցիալական ու փիլիսոփայական տեսութիւններն անքան զարգայած են, այդ առաջադէմ երկիրներն անդամ ապագային տրամադրութիւններ հանդէս չը դրին այնպէս, ինչպէս մենք արինք: Ոչ մի տեղ ընկերվարական միտքն ու ընկերվարական շարժութն անպիսի վառառողջ ու անիրական ձեւեր չընդունեցին, ինչպէս մեզանում»: Այժմ լսեցէք եզրակացաւթիւնը: «Այօր մեր ընկերվարական - զեմօկրատ ապրերի մէջ աւելի բանաւոր, աւելի առողջ վերաբերմունք կայ դէպի ազգային հարցն առհասարակ և դէպի մեր լեզուն մասնաւորապէս»: Այսակ մենք չենք խօսի մատաղ թերթի այդ կարծիքի մասին. նա անքան անտեղեակութիւն ու միամտութիւն է պարունակում իր մէջ: Նա նոր ու ինքնօրինակ չէ նոյնպէս. այն թէ

եւրօպայում, թէ՛ մուսատանում և թէ՛ հայ կեանքում մենք ընտելացել ենք լսելու ամեն անդամ, երբ այս կամ այն հոսանքը կամ գրական օրդանը ուղել է իր անհամաձայնութիւնը, տհաճութիւնը, ատելութիւնը արտայալտել մարքսիստական բանակին: Աւշագրութեան արժանի միմիայն այն է այստեղ, որ «Բագուի Զայնի» խմբագրականը վաւերացնում է միշւած վիճաբանութիւնները՝ նրանցում արտայալտված մարքսիստների կարծիքները:

Արգեօք այդ վաւերացումը բաւակա՞ն է. արգեօք չպէտք է իիմել անմիշական ազրիւրների: Եթէ վերշիններս չը կան, թերթի խմբագրականը կարող է մոլորեցնել ընթերցողին. իսկ եթէ նրանք կան, լաւ է դիմել նրանց և այնպէս պարզել իրերի դրութիւնը:

Սրբակիսի ազրիւր կայ: Դա մի գրաւոր վկայութիւն է, տպված նոյն «Բագուի Զայնի» ս. տ. № 65-ում և դուրս եկած մարքսիստ Դ. Անանունի դրչի տակից: Դա նրա «Հինն ու նորը» ընորոշ վերնագիրը կրող յօդուածն է: Ի՞նչ է առում հեղինակը իր այդ յօդուածում:

Վրացի մարքսիստներից մէկը\*) բաց է թողել մի դրչոյէ՝ ազգային-կուլտուրական աւտօնօմիայի պահանջով: «Հետաքրքրական բովանդակութիւն ունի» այդ գրքոյէր, և «հայ գեմօկրատիայի համար նա անհատելի չը պիտի մնայ: Եւ դա մանաւանդ այն պատճառով, որ գրքոյիի առաջադրած ոկրքունքները վրաց գեմօկրատիան արգէն ընդունել է որպէս ծրագրային պահանջ»\*\*):

Բանից գուրս է գալիս, որ այսօր մեր մարքսիստներն ազգային հարցին մօտենում են ազգային-կուլտուրական աւտօնօմիայի պահանջով:

Ազգային կուլտուրական աւտօնօմիայի պահանջը ռու-

\*) Խօսքը ժօրվանփայի մասին է:

\*\*) Ազգային նարցի մասին նորես Դ. Ասանունը գրել է նև Շոյր Հովանք անսաթերթում: Մինչեւ այժմ մօգ չէ աշողվել նրա այդ յօդուածը կարդալ:

սաստանեան մարքսիստների համար նորութիւն չէ: Մինչեւ  
այսօր այն չերմ կերպով պաշտպանում են հրեայ մարքիստ  
ները՝ բռնդիստները, որոնց կողմից ալդ պահանջը տակա-  
ւին 1903 թ. զրված է եղել ուստաստանեան մարքսիստների  
II համագումարի սեղանի վրայ: Համագումարը մերժում է  
այն, որակելով նացիօնալիստական, ապա ուրեմն՝ բուրժուա-  
կան և ոչ-պրոլետարական պահանջ: Այնուհետև զրականու-  
թեան մէջ և քաղաքական ժողովներում ալդ հարցի շուրջը  
բացվեց տաք ու երկար վիճաբանութիւն, որ վերջին ժա-  
մանակներու զարմանալի փոփոխութեան ենթարկվեց: Կովկա-  
սեան մարքսիստները, բազկացած գլխաւորապէս, թերես և  
բացառապէս վրացիներից, իրանց վերջին շրջանափին համա-  
գույնում առաջ մղեցին ազգային-կուլտուրական աւատոնո-  
միայի պահանջը: Դրա արձագանքն է վրացի ռանուանի  
մարքիստի» վերեւ իշլամ գրքոյիր, որ այնքան դուր է եկել  
հայ մարքսիստ Դ. Անանունին: 1912 թ. օդոստոսին ուստա-  
կան մարքսիստների նախկին աշ թեր կողմնակիցների բազ-  
կացած մի խմբակ—լիկվիդատորները, այսինքն՝ բանուորական  
շարժման միջնակ այժմ առաջարված պահանջներից լիկվիդա-  
ցիայի (վերացման) ձգտողները—հրաւիրում է համագույն,  
որին ի միջի ալլոց ներկայ են լինում և կովկասցիները,  
դարձեալ գլխաւորապէս, թերես և բացառապէս վրացինե-  
րից բազկացած: Համագույնը զբաղվում է և ազգային խնդրով,  
որի վերաբերմամբ նա հետեւեալ վճիռն է ընդունում: «Լոե-  
լով կովկասեան պատղամաւորութեան լուսարարութիւնը՝ թէ  
ինչպէս կովկասեան կազմակերպութիւնների վերջին համագու-  
յութում, նոյնպէս և ալդ կազմակերպութիւնների գրական  
օրգաններում պարզվել է կովկասեան ընկերների կարծիքը  
ազգային-կուլտուրական աւատոնոմիայի պահանջը դնելու ան-  
հրաժեշտութեան մասին,— համագույնը չարտայալով քսա-  
էութեան ալդ պահանջի՝ գտնում է, որ կուսակցութեան  
ծրագրի ազգային ինքնորոշման վերաբերեալ կէտի ալդօրի-

նակ մեկնութիւնը չէ հակասում ծրագրի իսկական իմաս-  
տին...»

Ալդ վթիաք լսա երեոյթին օրինականոցնում է ազգա-  
յին-կուլտուրական աւատոնոմիայի պահանջը: Համագույնը զե-  
կավարները, որոնք 10 տարի առաջ փրփուրը բերաններին  
խաչ էին հանում ազգային-կուլտուրական աւատոնոմիստներին,  
այսօր նրանց երգուեալ պաշտպաններն են գարձել իսկ այդ  
ժամանակամիջոցում մեր երկրի պայմաններն աղդային հարցի  
նկատմամբ ամենեեին չեն փոխվել:

Այժմ հարցը մասուլի զբաղման առարկայ է գարձել:  
Մարքսիստական «Պրավда» օրաթերթը նշաւակում է ազ-  
գային խնդրի այդօրինակ լուծումը: լիկվիդատորական «Լոց»  
օրաթերթը ազգային-կուլտուրական աւատոնոմիստների պաշտ-  
պանն է: Մարքսիստական «Պրօւեցենիե» ամսաթերթը  
հանդէս է եկել ազգային-կուլտուրական աւատոնոմիայի խիստ  
քննադատառութեամբ: լիկվիդատորական «Հապա Յարյ» ամսա-  
թերթն ազգային-կուլտուրական աւատոնոմիայի գէմ ոչինչ  
չունի: Վէճը անցաւ և ալդ ազգերին: Նրէաները ցնծում են, որ  
իրանց տեսակէտը լաղթանակում է: Լեհացիները պախարա-  
կում են: Վրացիները նրէաների հետ են: Ահա՛ և հայերը:  
Այստեղ էլ կան ազգային-կուլտուրական աւատոնոմիայի սիրա-  
հարներ:

Ի՞նչ է նշանակում այս ամենը: Ինչո՞ւ մարդիկ «հինգը»  
թողած «նորին» են անցնում:

Հասարամակական կեանքի իւրաքանչիւր շրջան իր արա-  
մագրութիւնն ունի: Վերջին տարիների բազարական քէակ-  
ցիան Ռուսաստանում առաջ բերեց հասարակական յունեա-  
ստութիւն, որին լաջորդեց հասարակական մտքի թուլութիւն  
և կամքի կրաւորականութիւն: Դրա արտայալութիւնն է ար-  
ժեքների վերաբնահատութիւն կոչւածը, որ տակաւին շա-  
րունակում է: «Արժեքների վերաբնահատութեան» է են-  
թարկվել այսօր և ազգային հարցը:

Խուսական մարքսիստներից մեկուսացած լիկվիդատօրները, հասկանալի է, տակտիկայի վերաբնութիւնից յետոյ պարապելու էին և տեսականի վերաբնութեամբ, մանաւանդ որ ազգային-կուլտուրական աւտօնօմիայի պաշտպանութիւնը նրանց կողմից մի քաղաքադիտական քայլ էլ է՝ կողմակից ներ ձեռք բերելու։ Եւ եթէ ուրիշներն են գնում նրանց ետեից, ապա ժամանակի ազդեցութիւնն այդ ուրիշների վրա պէտք է կրկնակի համարել։

Այսպէս թէ այնպէս ազգային հարցը հրապարակի վրա է՝ դոնէ իր գործնական մասով։ Ազգային-կուլտուրական աւտօնօմիա. նա այժմ նշանաբան է դառել ոչ միայն մի շարք մարքսիստ կոչվողների ու մարքսիստ ձեացողների համար, այլ և ուրիշ ձախակողմեան տարրերի համար, թէև միաժամանակ ուժգործէն առաջ են մղվում և ազգային հարցի լուծման այլ ձեերը։

Քաղաքական շրջանն այսօր շատ բան է ասում, իսկ ազգային հարցի լուծումը խոշոր նշանակութիւն ունի։ Այդ տեսակէտից անհրաժեշտ է զբաղվել այդ խնդրով՝ ոչ թէ միայն ներկայումս մտքերը լուզող նրա մի լուծման ձեռք, ինչպէս ազգային-կուլտուրական աւտօնօմիան է, այլ և նրա բոլոր հնարաւոր ու առաջադրվող ձեերով, մանաւանդ որ նրանք իրար հետ կապւած են։

Մենք առանձնապէս չենք զբաղվի այստեղ ազգային հարցի տեսականով. նա մեր ծրագրից դպւրս է։ Ազգային հարցի գործնականը, նրա արդի «լուծման» ձեերը, — ահա՛ ինչի մասին մենք կը խօսենք։

## I.

Ազգային հարցի լուծման ձեերն են՝ 1) ֆեդերացիան (գաշնակյութիւն), 2) աւտօնօմիան (ինքնօրինութիւն) իր այլ և այլ տեսակներով, 3) աեղակտն ինքնավարութիւնը և 4) ազգային ինքնորոշումը։

Ֆեդերացիայի, աւտօնօմիայի կամ ինքնավարութեան խնդիրներով զբաղվածները նրանց սովորաբար կապում են պետական իրաւունքի մէջ կենտրօնացում ու ապակենարօնացում կոչված հասկացողութիւնների հետ։ Եթէ կայ կենտրօնացում, ուրեմն կայ և բիւրօկրտափական, իսկ եթէ կայ ապակենարօնացում, յանձնամ չը կայ բիւրօկրտափական, այլ կայ ռամկավարութիւն։ Ֆեդերացիան, օրինակ, ժխտում է կենտրօնացումը, ուստի և բիւրօկրտափակմը, իսկ տեղական ինքնավարութիւնը հեռու է ապակենարօնական լինելուց, ուրեմն նա չի վերացնում բիւրօկրտափակմը։ Այսպէս են մասնում ֆեդերացիայի ու կենտրօնացման մասին գրակ հեղինակներից շատ շատերը՝ ոչ թէ միայն հայկական տնաբոյս ֆեդերօգների շարքերից, այլ և այդ խնդիրների լուրջ հետազոտողներից մի քանիսր։ Որքան էլ դա զարմանալի լինի, այնուամենայնիւ փաստ է։ Իսկ զարմանալու բան կայ, որովհետև այդպէս մտածողները հեռու են նոյն իսկ մակերեսակին ժանօթութիւն ունենալուց պետական իրաւունքի տարրական սկզբանքներին։

Դժուար է հասկանալ, թէ ինչ անմիջական կապ կարող է գոյութիւն ունենալ ֆեդերացիայի և ապակենարօնացման

մէջ: Մէկը բառի ընդարձակ իմաստով կառավարական ձե է, միւսը պետական-վարչական որոշ սիստեմ է: Կենտրօնացում և ապակենտրօնացում կոչվածք կարող է երկու աեսակ լինել օրէնսդրական կամ քաղաքական ու վարչական:

Վերցնենք ապակենտրօնացումը: Եթէ նա վերաբերում է երկրի վարչական մեխանիզմին, կոչվում է վարչական, իսկ եթէ ողջ պետական կազմին՝ նա քաղաքական է կամ օրէնսդրական: Մի երկիր ունենալով քաղաքական ապակենտրօնացում, վարչապէս կարող է լինել կենտրօնական և ընդհակառակր. ուրեմն, ապակենտրօնացման հետ կողը-կողքի կայ կենտրօնացում: Մեղերացիան, օրինակ, քաղաքական ապակենտրօնացում է առաջ բերում, մինչքեռ նրա վարչական կազմը միաժամանակ կարող է կենտրօնացած լինել, որ առաջ է բերում բիւրօկրատիա, ամսինքն՝ արհեստական աստիճանաւորների մի դաս, որի ձեռքին կենտրօնացած է ողջ վարչական մեխանիզմը յանձինս նրա դիւանների (կանցելերիա), նման հէնց մեր մինխստրութիւնների գեպացտամենտների: Դեպարտամենտներում բոյզը, գործերը պատրաստվում ու մշակվում են, այնուհետեւ նրանք ընկնում են մինխստրների ձեռքի՝ նրանց վճիռը ստանալու համար: Բիւրօկրատիան կտրված է տեղական տարրերից ու նրաց կարիքներից: Տեղերում ամենայն ինչ կատարվում է վերեբ՝ բիւրօկրատիայի կամքով ու թեղադրութեամբ: Այսպիսով տեսնում ենք, որ ֆեդերացիայի կողքին կարող է բիւրօկրատիա լինել Վերցնենք հակառակը:

Երկրի քաղաքական կազմը կենտրօնացած է, այն ինչ վարչականը ապակենտրօն է, ամսինքն՝ տեղերում կան իրնավարութիւններ, որոնցում ողջ վարչական մեխանիզմն առաջ է տարվում տեղադրից ընտրված կամ, ինչպէս առում են, հասարակութեան ներկայացուցիչների միջոցով: Նրանք աստիճանաւորներ չեն, քանի որ ընտրովի են, և ոչ էլ արհեստական պաշտօնեաներ են: Նրանք տեղական ներկայացուցիչ:

Ներ են, բիւրօկրատիզմի մի մազը անդամ չը կայ նրանց դիմին:

Ի՞նչ է դուրս դալիս: Երկրի քաղաքական կազմը կենտրօնացած լինելով, այնտեղ ֆեդերացիայի մասին խօսք մինել չէ կարող: Այնտեղ պետութիւնը մի կենտրօնացած քաղաքական մարմին է ներկայացնեալ, բայց նրա վարչական ձեր ապակենտրօնական է, «չ-բիւրօկրատական»: Չը կալ ֆեդերացիայի (ինչպէս և աւտոնօմիալի) շունչն անգամ, չը կալ և բիւրօկրատիա:

Խօսենք օրինակներով: Ինչպէս յայտնի է, Գերմանիան ֆեդերատիվ պետութիւն է, թէե ոչ լրիւ ֆեդերատիվ, այն ինչ նրանում բիւրօկրատիան շատ ուժեղ է: Գերմանիան բիւրօկրատիզմի դասական հայրենիքն է համարվում: Պատմաբանն գիտականներից մէկը՝ Լ. Օլտոնը նոյնիսկ շատ հեռուն է գնում ասելով, որ «Գերմանիան մի ֆեդերացիա է՝ նախագահութեամբ Պրուսիայի թագաւորի, որը կայսրութեան կեր կազմող ալլը թագաւորութեան ամենաազդեցիկ դէքըն է: Գետութեան ֆեդերացիան կազմող մասեալ բաժինների մեծ մասը թագաւորութիւններ կամ իշխանութիւններ են, որ բուն ակալական վարչութիւն ունեն, թէե արտաքուստ և միմիայն արտաքուստ նրանք պահպանում են սահմանադրական ազատութիւնը» (ընդգծումը մերն է. — Ա. Մ.): Գերմանիային շատ նման է Աւստրիան, որ աւտոնօմ-շրջանալին պետութեան համարում ունի\*):

Քաղաքական կենտրօնացում է Անդիխայում (բուն երկրում), սակայն նրա վարչական կազմի վերին ծայր ապակենտրօն է: Անդիխական selfgovernement-ը, այդ տեղական լայն

\*) Տիպիկական բիւրօկրատական պետութիւն է թագավորութիւնը որով Դիւ 1 և II գլուխութիւնները: Դիւ 1 գլուխութիւնը այստեղ առաջ է գալիք բիւրօկրատիզմի ներկայացուցիչները: Դիւ 2 գլուխութիւնը՝ ավաշոնեանները: Դիւ 3 գլուխութիւնը՝ կայսեր կայսիութիւնը (consistorium principis). Կայսեր այս հրամանատարը, որի ձեռքում են կենտրօնանում ներկրի օրէնտրական, վարչական ու գատական գործերը:

ղական ներկայացուցիչներն են սոսէ: Ալդպէս է կենտրօնաց=ծ ու բիւրօկրատական ֆրանսիան:

Բայց և կան եքկիրներ, որտեղ քաղաքական ապակենտրօնացումն իրականացած է վարչական ապակենտրօնացման հետ միասին ու միաժամանակ: Այդ երկրներից են Հիւսիսային Ամերիկայի Միացեալ պետութիւնները ու Զվիյցերիան: Ամերիկան իսկապէս ֆեդերատիվ երկիր է. նա և ինքնավարութեան հայրենիքն է: Այսուեղ իւրաքանչիւր նահանգի ժողովական ներկացուցչութիւնը սահմանում է իր նահանգի համար օրէնքներ, որոնց գործադրութիւնը տեղի է ունենաւմ տեղական շերիֆների և այլ վարչապետների ձեռքով: ոչ մի վարչական ժառանող միւսից կախում չունի և չի էլ նշանակվում, թէև, ի հարկէ, կան բացառութիւններ. ամենասուրին ժառանողները, նահանգները չունեն նոյնիսկ կենտրօնական վարչական մարմիններ, ապակենտրօնացումը հասցված է մեծ չափերի: Լայն քաղաքական ապակենտրօնացում և նոյնքան էլ լայն վարչական ապակենտրօնացում, որի հետեւնքն է բիւրօկրատիայի ըսցակալութիւնը: Սա իսկապէս ֆեդերացիա է, ապակենտրօնացում:

Այս ամենից լետող, կարծում ենք, պարզ է թէ ինչ կապ կարող է լինել բիւրօկրատիզմի ու կենտրօնացման միջև առհասարակ: Ֆեդերացիայի պաշտպաններն իդուր են քանդել աշխատում իրանց ֆեդերացիալով բիւրօկրատիան, որովհետև վերջինս քաղաքական ապակենտրօնացման հետ կապ չունի, իսկ ֆեդերացիան, ինչպէս և աւտոնոմիան, քաղաքական ապակենտրօնացում է նշանակում: Բայց թէ ինչ արժէք ու նշանակութիւն ունի քաղաքական ապակենտրօնացումը, դա այլ ինդիր է և կապւած է ֆեդերացիայի գնահատման հետ, որին մենք ալժմ կանցնենք: Իսկ մինչ ալդ նկատենք, որ վարչական ապակենտրօնացումն իւրաքանչիւր ուամկավարական հոսանքի քաղաքական պահանջներից դլաւորագոյնը գէտը է լինի, քանի որ նա առհաւատչեան է բիւրօկրա-

ինքնավարութիւնը, լայտնի է գեռ XVIII դարից, որ այնուհետական ինքնավարութեան ախաղաք հանդիսացաւ: Նա ալսօր կազմում է ինքնավարութեան անդլո - ամերիկական ձեկի հիմքը: միւս ձեկի ինքնավարութիւնը վարչական իրաւունքի մէջ յայտնի է ցամաքային (Ֆրանսիա, Գերմանիա) անունով: սա ինքնավարութեան բիւրօկրատական ձեւն է\*): Անզիայի տեղական ինքնավարութիւնն երկրի կենտրօնական վարչութեան հետ ոչ մի կապ չունի, եթէ չը հաշւենք վերջինիս հակողութիւնը նրա վրա, մինչդեռ ցամաքային «ինքնավարութիւններ» ամբողջապէս կախւած են ու զեկավարուում են կենտրօնական իշխանութեան ձեռքով կամ միջոցով: Անզիական ինքնավար միաւորներ՝ դքսութիւններ, շրջաններ ու ծուխեր, զեկավարուում են իրանց տեղական ընտրովի «դքսութեան խորհրդով», «ընտրովի խորհրդով» ու «ծխական խորհրդով», որոնց կազմը ռամկավարական է. ընտրութիւններին մասնակցում է տեղական ազգաբնակութիւնը, նոյնիսկ առանց սեռի խարութեան:

Կան պետութիւններ կենտրօնացած երկու դէպրումն էլ, ինչպէս Ֆրանսիան կամ Իտալիան: Ֆրանսիան քաղաքականապէս կենտրօնացած է, կենտրօնացած է նա և վարչապէս: Հաշւում է, թէ Ֆրանսիան ունի տեղական ինքնավարութիւն, հաշւում է, թէ նրա «ինքնավար» մարմինները կառավարվում են իրանց ընտրոված «գեներալ խորհուրդով». սական ալդպէս հաշւում է միան: Ֆրանսիայի նշանաւոր գեպարտամենտները, որ առաջին հայեցքից, կարծես, իսկական ինքնավարութիւններ լինեն, ոչ այլ ինչ են, եթէ ոչ աշխարհագրական անուններ. տեղերում ամեն ինչ կատարվում է զանազան պրեֆեկտաների, սուպրեֆեկտների ու մէրերի կամքով ու ցուցմունքներով, որոնք մինիստրների տե-

\* Որ ամէի շատ կարմիր է առանամկենտրօնացում անումնել, բնակչութեամբ է պրօֆ. Թիրտուլեմին, այսինքն՝ կենտրօնական վարչութեան ֆունկցիաների մի մասի տաշխամբ տեղական հառավարչական իշմաքիւթիւններին:

տիալի վերացման, ռամկա-վարչական կարգերի հաստատման  
և տեղական ինքնավարութեան ու հաստրական ինքնա-  
դործունէութեան սկզբունքների տիրապետութեան:

## II.

Ի՞նչ է ֆեդերացիան, դաշնակցութիւնը:

Ֆեդերատիվ պետութիւնը հիմնվում է մի ընդհանուր պե-  
տական ֆեդերալ օրէնքով, որ և սահմանում է ֆեդերա-  
ցիաի դոշնակից մասմբին վերաբերեալ ընդհանուր կարգերը,  
ինչպէս՝ միջազգային համաձայնութիւններ, պատերազմ, պօստ  
և այլն: Սա ընդհանուր սահմանադրութիւնն է: Խոկ ֆեդե-  
րացիաի իւրաքանչիւր բաղացուցիչ մասը, իրը և այդպիսին,  
միանդամայն անկախ է, ունի իր օրէնքրութիւնը, վարչու-  
թիւնը, դատավարութիւնը, ինչպէս և սահմանադրութիւնը,  
որ նրա ինքնակազմակերպման իրաւունքն է նշանակում (այդ  
երեսում է աւտորալիտական սահմանադրութեան 106-րդ յօ-  
դուածից): Լուս այդ ինքնակազմակերպման իրաւունքի իւրա-  
քանչիւր դաշնակից նահանգ կարող է իր հիմնադիր ժողովը  
հրաւիրել, վերջինիս միջոցով ուրւագծել իր ողջ օրէնսդրու-  
թիւնը, որ միանդամայն ինքնուրոյն է և կախում չունի  
պետութեան ընդհանուր օրէնքներից: Ֆեդերացիան քաղա-  
քական ապակենտրոնացման ծալքայեղ ձևն է կազմում:

Այսօր ֆեդերացիայի պահանջը դրվում է որպէս աղքա-  
յին հարցը լուծող մի միջոց: Բայց այդ միջոցը կասկածելի է:  
Ոչ մի ազգ ներկայումս ամբողջապէս մի տերրիտորիայի վրա  
չի նստած. տնաեստական կեանքն աղքերին զրում է. մի աղ-  
դակին հատուած մտնում է մի քանի ազգութիւնների վայրը,  
մի քանի ազգային հատուածներ ընկնում են մի ազգութեան  
գիրք: Վերցնենք հէնց Կովկասը. ենթադրենք, որ նա ապա-  
գայ ֆեդերատիվ Ռուսաստանի մի մասն է՝ անկախ ու ինք-  
նուրոյն իր դատական, վարչական ու օրէնսդրական գործե-

րում: Նու ունի իր պարլամենտը, կազմված ռամկավարական  
քնտրողական իրաւունքի համեմատ. այդ պարլամենտում մե-  
ծամասնութիւնը կը լինի այն ազգութեան կողմը, որ կով-  
կասում թւով ամենից մեծն է, հաշվում. եթէ դա թուրքերն  
են, ապա նրանք երկրի քաղաքական կեանքի թելադրիչները  
կը լինեն, ի հարկէ, ամենից առաջ ազգային խտրութեան  
քաղաքականութիւնն առաջ տանելով: Խոկ ի՞նչ կը լինի կով-  
կասեան սակաւաթիւ ցեղերի գրութիւնը, օրինակ, հրէտ-  
աների: Ահա և ենթադրեալ կովկասեան ֆեդերացիայի նա-  
հանգները: Երևանեան նահանգը, որտեղ ըստ 1904 թ. «Պա-  
մյանա կույտագործութիւն» ազգաբնակութեան  
55,5% հայերն են կազմում, 37,2% թուրքերը, իսկ  
7,3% այլ ցեղերը, ազգերի անվերջ տարածայնութիւնների և  
ճնշումների վայր և ներկայացնելու. նոյն պատկերն է սահցվե-  
լու և Գանձակի նահագում, որտեղ 1905 թ. «Կավկազի  
Կալենդար»-ի համաձայն՝ թուրքերը 77%, հայերը 22%, իսկ  
այլ ցեղերը 10% են կազմում. Գուրիան կը տայ վրացիների  
բացարձակ մեծամասնութիւն: Մի տեղ հայն է ննշելու, միւս  
տեղում թուրքը, երրորդ վայրում վրացին: Անշուշտ կա-  
ռարկեն, թէ երկրի ռամկավար կաղմը մեծամասնութիւն  
կազմող ազգի ոտնակութիւնների գէմ պատուար կը հանդի-  
սանայ. բայց միթէ նոյն բանը չի ենթադրվում քաղաքական  
կենարօնացման դէպքում: Անգլիան փառաւոր օրինակ է.  
ինչո՞վ է նա պակաս չի սիսային Ամերիկայի Միացեալ Պե-  
տութիւններից: Ֆեդերացիան չի լուծում ազգային հարցը.  
նա աւելի շուտ տեղական նշանակութիւն ունի չիւսիսիա-  
յին Ամերիկայի կամ գերմանական ֆեդերացիան ամենելին էլ  
չի խորշում ազգային կամ ցեղական կահւներից:

Ֆեդերացիան ազգային հարցը չը լուծելով հանդերձ  
պետութեան շահերին վնաս է հասցնում: Նկատենք, որ մեր  
խօսքը իրանց բոլոր մասերում այսպէս թէ այնպէս կուլտու-  
րական ու պատմական անսակեաներից որոշ նժանութիւն

կամ թէ միօրինակութիւն ներկայացնող պետութիւնների մասին է: Այստեղ մենք յարաբերական չափ ենք զործածում: Որոշ ու շատ պայմաններում ֆեդերացիան միանդամայն անարժէք է, վնասակար, բայց և այլ պարագաներում, որպէս երկու չարեաց ֆոքրագոնը, նա կարող է ծառալութիւն մատուցանել: Ո՞վ է կասկածում, որ ներկայ թիւրքիայում ֆեդերացիան (թէ աւտոնօմիան) անհրաժեշտ ու օգտակար հիմնարկութիւն չի լինի, քանի որ հայերը կամ յոխները իրանց աւելի բարձր կուլտուրալով ամեննեին չեն կարող զեկավարվողի դերում գտնել իրանց գլխին ունենալով այնպիսի մի հովանաւոր, ինչպիսին թիւրքական լետամնաց ու բարբարոս կառավարութիւնն է. նոյնը կարելի է ասել և արարների նկատմամբ: Ֆեդերացիան որոշ դէպքերում օգտակար է, նոյնիսկ մի քանի պետութիւնների միջև: Այսօր բալկանեան մանր իշխանութիւններին ֆեդերացիան անհամեմատ աւելի շատ բան կը տայ, քան թէ նրանց զատ-զատ գոյութիւնը, որ անվերջ բնդհարումների դուռն է բաց արել արդէն:

Իր մասերով միօրինակութիւն ներկայացնող պետութեանը նամանաւոնդ ամեննեին էլ պէտք չէ ֆեդերացիան, որովհետեւ վերջինս զատում է նրա արդիւնաբերական, ֆինանսական և առևտրական ոլորտը. նա հարուած է հասցնում և ժողովրդական տարրերի բաղաքական ու հասարակական գործակցութեան, նրանց կաղմակերպչական կարողութեան: Մինչդեռ ֆեդերացիան ընդունակ է գործիք դառնալու մի տերիտորիայի վրա բնակվող ցեղերից մեծաքանակի ձեռքին՝ նրա տիրապետող զասակարգերի ձեռքին. օրինակ, ֆեդերատիվ Ռուսաստանի լեհական նահանգը ամբողջապէս կը գրաւելը լեհացիների, ասել է թէ լեհական տիրապետող տարրերի ձեռքին: Նրանք կը դերիշինեն երկրի տնտեսութեանը ի վնաս մնացեալ ազգութիւնների:

Ֆեդերացիայի պահանջը էապէս բուրժուական պահանջ է. ռածկավար տարրերը նրա հետ գործ չունեն՝ ի բաց առեալ

որոշ բաղաքական ու հասարակական մօմենտները, որի մասին վերեում խօսեցինք: Խուսաստանի հասարակական-բազաքական պայմաններն այսօր այնպէս են դասաւորւած, որ նրանում ֆեդերացիայի կարիքը չի զգացվում: Եւ եթէ կան մարդիկ, որոնք ֆեդերացիա են ասում ու ֆեդերացիա են լսում, ապա նրանք դեռ չեն իշել մոլորութեան ճանապարհը, որի համար բաւականին ժամանակ ու բաւականին աշխատանք է հարկաւոր, ասենք գրութիւնն այնքան էլ անյուսովի չէ. Ֆեդերացիայի պահանջի լետերից գնացողների մի խոշոր մասը վերջերս թողնելով այն՝ անցնում է աւտոնօմիայի՝ ինքնօրինութեան գաղափարին:

## III.

Աւտոնօմ կազմ ունեցող վայրը դեկավարվում է իր սեփական օրէնսդրութեամբ (ինչպէս և վարչական մեխանիզմով), որը, սակայն, չը պէտք է հակասէ համապետական օրէնսդրութեան. նա չէ կարող ունենալ իր սահմանադիր ժողովը, ուստի և սահմանադրութիւնը: Աւտոնօմ վայրը իր իշխանութիւնը ստանում է կենտրոնական իշխանութիւնից, այն ինչ ֆեդերատիվ վայրը՝ այլ ֆեդերատիվ վայրերի հետ համաձայնութեան մէջ մտնելով: Աւտոնօմիան սահմանափակ ֆեդերացիա է:

Սակայն աւտոնօմիան մեծապէս տարրերվում է ֆեդերացիայից շնորհիւ այն հանդամանքի, որ նա ունի իր առանձիները: Այն ժամանակ, երբ ֆեդերացիան կապված է անպայման օրոշ տերիտորիայի հետ, աւտոնօմիան կարող է նրա հետ կապւած չը լինել այսպէս՝ կայ աւտոնօմիա հողացին, կայ ազգային կամ բաղաքական, ազգային-կուլտուրական, վերջապէս խառն աւտոնօմիա:

Հողային աւտոնօմիան իր յատկութիւններով չէ տարրերվում ընդհանրապէս աւտոնօմիայից, որի որոշումը տւինք



մի թիւ առաջ: Իսկ ինչ կարելի է առել նրա որժեքի մասին: Հզգային աւտօնօմիան մեղմացրած ֆեղերացիա է, և նրա պահասութիւնները նոյն են, ինչ և ֆեղերացիալինը, սակայն առելի նուադ չափերով, այդ է պատճառը, որ ախօր նոյն իսկ մարքսիստներից ոմանք, որպէս երկու չարեաց փաքը առոյնը, Ռուսաստանում գնում են հողային կամ, միննոյն է առել, շըշանալին աւտօնօմիայի պահանջը: Դա, մեր կարծիքով, անհիմն պահանջ է, այն գնողները խոացնում են իրերի դրութեան զոններն արդի Ռուսաստանում կամ թէ որոշ զիշում են անում այն մարդկանց, որոնք թեթև սրտով ֆեղերացիալի կամ աղդային ու աղդային-կուլտուրական աւտօնօմիայի հեռանկարներով են տարւում:

Աւտօնօմիալի մի այլ տեսակն է աղդային կամ աղդային-բաղաքան և կամ անձնական աւտօնօմիան, որի տեսաբանը Աւտօրիացի Նպրինդերն (կեղծանուամբ՝ Սինօպտիկուս) է համարվում: Աղդային աւտօնօմիա նշանակում է պետութեան ծոցում ապրող իւրաքանչիւր աղդութեան աւտօնօմ գոյութիւն, որի հիմքն է կազմում ոչ թէ տերրիտորիան, այլ աղդութեան պատկանելիութեան փաստը. մի աղդութեան պատկանող բօլոր անդամները, թէկուղ նրանք իրարից բաժանւած լինեն հազարաւոր վերսու տարածութեամբ, միանում են իրար հետ սրոշ աղդային պէտքերը հոգալու համար, պէտքեր, որ խլում են ընդհանուր իշխանութեան իրաւասութիւնից. այդ պէտքերից են, օրինակ, ժողովրդական կրթութիւնը, արհեստական կրթութիւնը, կուլտուրան պահպանող հիմնարկութիւններ՝ թատրօն, գրադարան, հնագույն, գիւղատնուեական կուլտուրայի զարդացումը, այսպէս կոչքած աղդային կապիտալի բարդաւաճումը, աղդային առաջութեան և գաղթականութեան խնդիրները: Այդ պէտքերի հոգացութեան համար կազմում են աղդային համայնքներ, համայնքերից բազկանում են շըշանալին համայնքներ, որոնց զիսին կանգնած է աղդային համաժողովը. այսպէս են զոնէ ներկա-

յացնում պատկերը հրեական «սէյմիստները»: Անկախ կենտրոնի իշխանութիւնից՝ աղդային պէտքերը լուծվում են այդ աղդային մարմինների միջոցավ:

Աղդային աւտօնօմիալի գաղափարը բղխում է նրա հեղինակների տուած աղդի կամ աղդութեան որոշումից: Նպրինդերը այսպէս է որոշում աղդը: «Նա միատեսակ մտածող ու միատեսակ խօսող մարդկանց միութիւն է. նա հողի հետ չը կապված մարդկանց կուլտուրական ընդհանրութիւն է»: Այսպէս աղդի գործօններից մէկը՝ տերրիտորիան, բացակայում է. ըստ Նպրինդերի աղդի առաջնակարգ գործօններն են լեզուն, կուլտուրան և հողերանութիւնը:

Մենք կարծում ենք, որ աղդային հոգեբանութիւն կոչվածը ախօր գոյութիւն չունի, նա վերածվել է դասակարգային հոգեբանութեան. բայց մենք մտածիր չենք քննադատելու Նպրինդերի այդ տեսակէտը: Մենք միմիան շեշտում ենք, որ այժմ կարող է խօսք լինել սոսկ այն խոշոր ու առաջնակարգ հասարակակուն երեսյթի մասին, որի անունն է գառակարգալին շարժում: Ցեղական շարժում, աղդային շարժում, — զրանք ինքնամփոփ մեծութիւններ չեն. արդի տնտեսական կեանքը այդ ամենը վերածել է մի յայտարարի՝ գասակարգային շարժման: Եթէ կայ աղդային ճնշում, աղդային կուր, դա՝ իմացած եղէք որ գասակարգային ճնշում և գասակարգային կուր է. աղդի տիրապետող գասակարգը, իր գասակարգային շահերի համար, շահագործում է աղդի անօւնը և նրանով հանդէս է գալիս. աղդային անօւնը նրա դասակարգային ցուցանակն է: Խօսել աղդային հոգեբանութիւնից կամ ընաւաբութիւնից, այն հոչակել առաջադէմ երեսյթ և նրա համար կոռւաններ սաեղծել ինչպիսին աղդային աւտօնօմիան է, կը նշանակէ բուրժուական կարդի աշխատանք կատարել, ուստի և հակառակ զնալ հետեղական ուամփավարականութեան գասակարգային շարժման ու նրա կուրի աշող ելքին: Զը պէտք է շեշտել ու հօգանա-

ւորել ազգային առանձնայտակութիւնները, որ կամաց-կամաց ձուլվում են արդի տնտեսական կեանքի հնոյում. ընդհակառակը, անհրաժեշտ է շեշտել դասակարգային հակամարտութեան վրայ, անհրաժեշտ է զարկ տալ ապագան շինող դասակարգի կույին, անհրաժեշտ է նպաստել նրա կողմակերպման դործին:

Մեր սկզբունքային ասելիքն ազգային աւտօնօմիայի մասին այս է. սակայն կը կամենալինք և ցոյց տալ առարկայուններ, նրա մի շարք պահասութիւնները, որ աչքի են զարում, երբ մենք դիմում ենք մանաւանդ այսպէս կոչված ազգային-կուլտուրական աւտօնօմիայի ընեւութեան:

## IV.

Ազգային-կուլտուրական աւտօնօմիան ազգային աւտօնօմիայի մի մասն է: Ազգային աւտօնօմ մարմինների իրաւասութեան պատկանող հարցերի շարքից վերացվում են սոսկ ազգային կուլտուրական պէտքերը, և նրանց ապահովութեան ու պաշտպանութեան համար ստեղծվում են համապատասխան հիմնարկութիւններ, որ միանգամայն աւտօնօմ են և կապված են այն ազգութեան և նրա անխստիր բոլոր հատուածների ու ցիրուցան անդամների հետ, որի կուլտուրական պէտքերի համար կեանքի են հրաւիրված նրանք: Այսպէս՝ միջազդային յարաբերութիւնների, Փինանսների, պօստի, աշխատանքի, երկրագործութեան և այն հարցերով կը զրադի կենտրոնական իշխանութիւնը իր օրդաններով, իսկ դռւու ազգային-կուլտուրական կարիքները կը լանձնվեն ազգային օրէնսդրական ու վարչական մարմիններին: Այս գէպօւմ, օրինակ, Ռուսաստանը ունենալով հանդերձ իր կենտրոնական պարլամենտը, կենտրոնական վարչութիւնը, տեղական պէտական իշխանութիւններն ու ինքնավարութիւններ՝ միւս կողմից պատաժ կը լինի ազգային-կուլտուրական մի շարք:

աւտօնօմ հիմնարկութիւնների ցանցով, ինչպէս՝ լեհական, մօլգավական, ռուսական, թաթարական, վրացական, բաշկիրական և այլն և այն:

Ի՞նչ պայմաններ կարող էին առաջ բերել ազգային-կուլտուրական աւտօնօմիայի գաղափարը:

Նրա հեղինակները Ռուսաստանում համարվում են բունդիստականներ՝ հրեական բանւորական միութիւնը: Հրեայ բանւորութիւններ իր անտեսական-հասարակական գիրքով ընտիր բանւորութիւն չէ. նա իր ճնշող մեծամասնութեամբ մանր ձեռնարկութիւնների և արհեստանոցների աշխատաւորներից է բաղկացած. Խոշոր - արդիւնագործական բանւորութիւն չէ հրեայ բանւորութիւնը: Այդ իսկ պատճառով ազգային իդէօլոգիայի ազգեցութիւնը նրա վրա գտալի է աւելի քան, մասնաւանդ որ հրեութիւնը մեզ մօտ ներկայացնում է միանգամայն իրաւագուրկ տարր. նա վազուց հետէ, կրում է հալածականի զմնկակ լուծը: Զը կայ մի անկիւն, որտեղ չը լսվի հրեայի հեծեծանքը. չը կայ մի բռունցք, որ ուղղված չը լինի նրա զլինին: Հրեական հալածանքները մի անժայր մարտիրոսագրութիւն են, պերճախօս ու ցաւատանշ մարտիրոսագրութիւն. արդեօք մի այլ ցեղ կը դիմանա՞ր այն ամեն արգելքներին ու չարչարանքներին, որոնց ենթարկված է եղել ու ենթարկում է Խորաչէլի սերունդը:

Ի՞նչ կարող է լինել այդ ամենքի հետևանքը: Հրեութեան կազմակերպումը յանուն իր մարգկալին իրաւունքների պաշտպանութեան. այդ կազմակերպումը տեղի էր ունենում աղջային գրօշակի տակ. դա ամենամտշելի գրօշակն էր, թէև հրեութեան հասուն ու հեռատես տարրերն անցնում էին հանրամարդկային, համայն ճնշվագների շարքերը:

Բայց ի՞նչ կարող էր աալ հրեաներին իրանց ազգային գրօշակը, քանի որ նա տարբերվում է այլ ազգային գրօշակներից: Այդ աարբերութիւնը բղխում է հրեութեան հասարակական գիրքից: Ներկայացնում է արդեօք այսօր

հրէութիւնը ազդ և ազգութիւն ալդ բառերի ժամանակակից իմաստով. Կայ արդեօք հրէալ ազդ: Ամանը պատասխանում են, թէ կայ, իսկ ոմանը՝ թէ չը կայ: Ինչո՞ւ չը կայ: Որովհետեւ հրէութեան կեանքում ազդի գործոններից զլխաւորադոյնները՝ տերդիտօրիան ու լեզուն բացակայում են: Հրէան զիրուցան է եղած երկրի երեսին. Նա չունի հոգին կպած դասակարգ՝ գիւղացիութիւն, ազդի ալդ հում նիւթը. իսկ հրէական ժարդոնը լեզու չէ: Զէ կարելի լուրջ կերպով խօսել և հրէական գրականութեան մասին: Մնում է մի ընդհանուր, շատ ընդհանուր մեծութիւն՝ հրէական կուլտուրան, ինչպէս և պատմական աւանդութիւնները, ստիալն գրանք չեն կարող գաղտնար տալ ժամանակակից ազդի ու ազգութեան մասին: Հրէան ունի կրօն, իսկ կրօնն ազգային գործոն չէ. ալդ տեսակէտից հրէութիւնը աւելի շռւտ մէ՛ կրօնական համայնք է:

Զը կայ հրէալ ազդ ներկայիս իմաստով, չը կայ և հրէական ազգային ծրագիր ալլ ազգերի ծրագիրների նման: Ֆեղերացիա կամ հողային աւտօնօմիա՝ գրանք հրէութեան համար ոչ ձեռնտու, ոչ-իրաւուելի լուծութեան են: Սլյդ է պատճառը, որ հրէական ձախակողմեան հօսանքների ծրագիրներում տեղ ունի ազգային կամ մի խօսքով ոչ-հողային աւտօնօմիայի պահանջք: Ազգային ծրագիր տալու տեսնդով բռնված բռնվիստները գեռ շատ-շատերից առաջ դնացին ալդ ուղղութեամբ ու մշակեցին ոչ-հողային աւտօնօմիաներից մէկը, ամենաճկունը և իբր թէ ամենատանխոցելին. Գա ազգային-կուլտուրական աւտօնօմիասներն իրանց հովանաւորութեան տակ են վերցնում ազդի սոսկ հոգեսոր-կուլտուրական պետքերը, որպիսիք են, 1) լեզուն, 2) մամուլն ու գրականութիւնը, 3) թատրօնը, 4) գրա-հնա-պատկերա-

գարանները, 5) կուլտուրական միութիւնները, 6) զպրոցը և 7) ալլ կուլտուրական պէտքերն ու սովորութիւնները:

Վաղուն խոշոր կուլտուրական գործոն է: Նա չը պէտք է Ենթարկվի ոչ մի ենշման ու հալածանքի, որովհետև նա մտաւոր ու հագեսր հազորդակցութեան միջոց է: Քանդեցէք երկաթուղիները, և կը բեկրեկվի առեւտուրը, կը քայրացի տնտեսական կեանքը: Ալլ խնդիր է, ի հարկէ, թէ հողորդակցութեան էլեքտրաշարժ միջոցներն աւելի բարձր են հազորդակցութեան շագեշարժ միջոցներից. քանի գեռ գործում է շագեշարժը, նրա քաղաքակրթական գերը անժխտելի է: Նմանապէս և ալլ խնդիր է, թէ մի լեզու ստոր է, յետաֆնաց է մի ուրիշից. քանի ալդ ստոր համարված լեզուն գեռ ընդունակ է հասարակութեան զարգացմանը ժառանգելու՝ նրա գրական գերը անժխտելի է. իսկ հէնց որ նա կանգնի կեանքի առաջնմթացութեան գիմաց, նա կը կորցնի իր արժէքը, և նրա տեղը կը բռնի աւելի ուժեղ, աւելի կենսունակ լեզուն: Մենք չենք շատագովում ազգային լեզուն, մենք և ոչինչ չունենք նրա գէմ, եթէ նա նպաստում է ազդի մասնակցութեանը քաղաքակրթութեան գործին, և մենք չենք կարող չընդդիմանալ այն պատճեշին, որ քաշվում է լեզուի առաջ, որպիս սկզբունքային պայքարողներ ընդդէմ ամեն մի բռնութեան՝ չենք կարող մենք մեր պաշտպանութեան ձայն չը բարձրացնել, երբ մի ազդի լեզուն արհեստական կերպով հալածվում ու հարւածվում է:

Դա մեր ծրագրի կարեսր կէտերից մէկն է. գա մեր ընդհանուր քաղաքականութեան էական քայլերից մէկն է: Թէ չէ՝ ի՞նչ մի առանձնապատռուկ կողմ պէտք է ունենայ ալդ պաշտպանութիւնը. ինչո՞ւ նա պէտք է մի առանձին ազգային պահանջ կազմէ. չէ՞ որ նա ընդհանուր է և մի այնպիսի հարց չի, որ մատչելի լինի սոսկ որոշ ազդի ներկայացուցիչներին, որ չը կարողանայ լուծել պէտութեան համայն ռամկավարութիւնը: Խնչո՞ւ ալլ վերջինս լայտարարում

է բոլորի համար խղճի ազատութեան սկզբունքը, և ամենքը համաձայնում են այն հանուր ռամկավարութեան հսկողութեան լանձնել. մի՞թէ խղճի ազատութեան խնդիրը չի մօտենում («աղղային») սահմաններին. մի՞թէ նա չի վերաբերում մահմեղական, հրեական, հայկական կամ ուղղափառ դաւանանքներին ու կրօններին:

Մուսաստանի հետեղական ռամկավարականները մայրենի լիզուի իրաւունքի հարցը դրել են լայն կերպով. այսպէս, մարքսիստների ծրագիրը շեշտում է աղղաբնակութեան իրաւունքը կրթութիւն ստանալ իր մալրենի լեզուով, իւրաքանչիւր քաղաքացու իրաւունքը՝ բացարվել իր մալրենի լիզուով ժողովներում, մալրենի լեզուի գործածութիւնը բոլոր տեղական հասարակական ու պետական հիմնարկութիւններում համահաւասար պետական լիզուի: Այս միւնոյնք ընդունում են և հայ-մարքսիստները: Սա համապետական պահանջ է և կարող է իրականանալ համապետական միջոցներով: Անշուշտ, նրա իրականացումը կախւած է պետական կազմի իսկական ռամկավարացումից, որը sine qua non է կազմում այդ պահանջի՝ այն դնող ռամկավար տարրերի տեսակէտից:

Մամուլ և գրականութիւն: Վերջինս զարգանում է իր, ալսողէս ասած, իմմանենա օրէնքնելով, որ անկախ են արտաքին արգելառիթ պայմաններից. սակայն, ի հարկէ, նրա խաղաղ զարգացմանը կարող են խանգարել և քաղաքական արգելքները, որոնց ներդորմութիւնը մեծ է մանաւանդ մամուլի վրա: Բայց ո՞ր մամուլը հեռու է այդ արգելքներից. հեսց պետականօրէն տիրապետող ազգի մամուլն իր լաւ մասով այսօր ամենալավան ճնշումների է ենթակար: Պատճառը քաղաքական մարմինն է՝ անկախ այս կամ այն ազգային քաղաքականութիւնից: Եթէ երկրի սահմանադրութիւնը չէ սանձահարում փարչական մեխանիզմը, ապա ձամուլի գրութիւնը միշտ էլ կը լինի վատ, որքան կուզէք գուրք պատեցէք նրան զանազան ազգային - կուլտուրական աւտօնօմիանների ցանցով:

Մամուլի և գրականութեան հարցը համապետական հարց է. այսուեղ չը կայ ազգային խտրութիւն, չը կան աղղային առանձնաբառուկ պայմաններ: Բացի այդ՝ մանր աղղակրի մամուլը մեզ մօտ չէ ճնշվում այնպէս, ինչու էս ճնշվում է արիապետող ազգի մամուլը. ճշմարտութիւնը ստիպում է խոստովաննել, որ այսօր Մոռաստանում ծալրագաւառների մամուլի գրութիւնը, համեմատած կենարօնի հետ, աւելի լաւ է:

Թւում է, թէ թատրօնի նկատմամբ էլ չը կայ մի առանձին «աղղային» քաղաքականութիւն, թէ նրա զարգացումն իւրաքանչիւր ազգի կեանքում կախված է այդ ազգի հոգեւոր պաշարից, ներքին աղղակներից. հա՛, կարող է պատահել, որ աղղային թատրօնի շէնքի կառուցման կամ աղղային թատրօնական ֆօնդ հիմնելուն կառավարութիւնն արգելը հանդիսանայ: Իսկ ռամկավար, թէկուղ ամենանուաղ ռամկավար կարգերում, ինչու պիտի յարուցանվեն այդպիսի խօչնդուաները. ընդհակառակը, պետութեան կենարօնական մարմիններին ձեռնառու կը լինի, եթէ մանր աղղերից ամեն մէկը ուղենալ իր թատրօնի պէտքերը ինքը հոգար ոչ մի խիկար աշխատանքի ազգօրինակ բաժանման առաջը չի կանգնի:

Ապա մտաւոր կուլտուրայի արտադրութիւնների պահպանութեան հա՞րցը: Մեր խօսքը գրագարանների, հնագարանների ու պատկերագարանների մասին է: Այս առիթով մենք աւելացնելու ոչինչ չունենք այն ամենի վրայ, ինչ ասացինք մամուլի մասին:

Կուլտուրական միութիւններ՝ հրատարակչական, ուսուցչական և այլն: Այսուեղ չեն մտնում բարեգործական ընկերութիւնները, որովհետեւ կուլտուրական միաւոր չէ կարելի համարել բարեգործութիւն անուանեալը, որ կոչված է ժողովրդական տարրերին ընեցնելու և տիրապետողների ձեռքին շահադործութեան համար գործիք դառնալու:

Մանօթ են մեզ միութիւնների աղատութեան վերաբեր-

եալ օրէնքները: Մէնք գեռ ձգտում ենք նրանց, որ մեր հիմնական պահանջների իրականացումից են կախված: Երբ որ համապետական ազատ օրէնսդրական մարմինները /մշակեն օրէնքներ, իսկ վարչական մեխանիզմը թռյ տալ ամեն տեսակի միութիւնների աղատորէն զարդանալու, այն ժամանակ նրանք կը սկսեն ծլել, իսկ նոր ծլածները — ինչպէս այդ հայերի մօտ է — կը ծաղկեն և իրանց ետևում պատմութիւն ունեցողներն արտգ կերպով կառաջարդիմէն: Ի՞նչ մի աղգալին տրագիցիա, աղգալին պրակտիկա ունեն այդ միութիւնները, որ նրանց հարցը լուծել չը կարգանայ համապետական ռամկավար կազմը:

Դպրոց: Սա գուցէ աղգալին-կուլտուրական աւտօնօմիսաներին մեր արած առարկութիւնների Ա.քիլիսեան կրունկը կազմէ, որովհետև դպրոցը աղջի կեանքում շատ մեծ դեր է կատարում. նա ունի պատմական նշանակութիւն, ծանրաբեռնվում է բազմաթիւ «աղգալին» աւանդութիւններով պարուրված է՝ աղգալին ողով: Երեխան ընտանիքից, հասարակութեան այդ որրանից ընկնում է դպրոց, մեծ մասամբ աղգալին դպրոցը, եթէ նա հնարաւորութիւն չունի համապետական կրթութիւն ստանալու: Աղգալին դպրոցները (աղգալին ողով) լենարաններից ամենաուժեղն են: «Աղգալին ողին» աղջի տիրապետող տարրերի կամքի ու ցանկութիւնների արտայալուին է. նրանով մնում են տիրապետվող տարրերի զաւակները, քանի որ նրանք աղգալին դպրոցներում կրթվող սաների 99,9% ն են կազմում: Եթէ աղգալին կուլտուրական աւտօնօմիսաներն իրանց գեղատօնի վրա հիմնված ուղղում են «աղգալին ողով» տարածման քաղաքական առաջարկութիւնը առաջ տանել, այն ժամանակ մեր նանապարհները միանդամայն տարրերվում են իրարից:

Անշուշտ, դպրոցներն աղջերի կեանքում բացի «աղգալին ողով» ունեն և այլ աղգալին այսպէս կոչված առանձնալատկութիւններ, ինչպէս՝ մայրենի լեզուով դասաւան-

դելր, մայրենի պրականութեան ու պատմութեան դասաւանդութիւնը, ուսուցչական մարմնի ինքնօրինութիւնը իր աղգալին շրջանակներում, աղջալին հոգաբարձութիւնը: Բայց ովք կարող է այդ ամենին հակառակ դնալ: Եւ մենք ասում ու կրկնում ենք, որ ռամկավար պետութիւնը գրա համեմատ էլ օրէնսդրութիւն կը ծշակէ: Սակայն կայ առաջիկութիւն՝ շատ անդամ տեղական պէտքերք կենարօնի հողմից չեն հոգացվում, որ հասկանալի է. չէ, որ զրա համար պէտք են ռազդալինը միջոցներ, ալդապիսի մի միջոց է աղգալին-կուլտուրական աւտօնօմիսան նոյն առարկութիւնն է արվում նոյնպէս աղգալին սովորութիւնների և աղգալին-կուլտուրական այլ պէտքերի պաշտպանութեան հարցում:

ԱՄատաղը» հայերի աղգալին սովորութիւնն է: Նարամի տօնումը հրէաների համար խոշոր աղգալին սովորութիւնն է: «Կрестով խօճ»-ը ռուսական սովորութիւնն է: Աղգալին-կալլուրական աւտօնօմիսանները պաշտպանելու են այդ ամենը: Եւ գեռ ինչպիսի աղմուկ են բարձրացնում այդ առիթով: Այսօր հրէանան շարաթի տօնումը բունդիստների համար ծրագրալին պահանջ է դառեր Դա մի ցաւալի, սակայն իրական փաստ է:

Մէնք այսօր ականատես ենք այն բանի, թէ ինչպէս աղգալին-կուլտուրական աւտօնօմիսաններն աղգալին սովորութիւններ կոչվածը կամ աղգալին գպրոցներում պատւաստվող «աղգալին ողին» և այլ աղգալին հրաշտիքները իրանց բարձր հովանաւորութեան տակ են տանում: Իսկ այդ հրաշտիքների աեղը շատ է: Մէղ թւում է, թէ աղգալին դպրոցը, աղգալին պէտ-պէտ միութիւնները դրական մեծութիւններ են: Մէնք շատ անդամ չենք էլ կասկածում, որ նրանք ունեն և իրանց բացասական կողմը: Եթէ մենք աշ և հաեակ աղգալին առանձնայատկութիւնների անունից ենք ճառում, զրանով արդէն վերցնում ենք մեր վրա և նրանց բացասական լատկութիւնների պատասխանաւութիւնը: Այն ինչ, մենք

հեռու պէտք է լինենք այդ պատախանատութիւնից: Մեր դործը չէ «աղքալին ոգի» սրսկելով զբաղվելը. հետեւզական ռամկավարականին ծիծաղելի է ինչ-որ շարաթի հարցավ պարապելը. այդ ամենը նրա համար դատարկ հնչիւն է լոկ:

Աղքալին. կուլտուրական աւտօնօմիան նպաստում է սեպարացիալին, այսինքն՝ ազգերի անջատման, նրանց ռամկավար ոյժերի առանձնացման իրարից: Ինչ-որ աղքալին քաղաքականութիւն է ստեծվում, ինչոր աղքալին խրճիթներ են հիմնվում: Հայր իր խրճիթում «մատաղ» է պատրաստում, հրէան իր խրճիթում իր շարաթ-օրն է կարկատում, ուսւը իր խրճիթում «Կрестնայ խօճ-ի համար ծրագիրներ է կազմում: Իրարից անկախ, իրարից անջատ: Մէկը միւսի հետ գործ չունի: Իրաքանչիւրը դէպի իր կաղմն է քաշում, իսկ ժողովրդական շարժման ազատարար կառքն իր տեղումն է կանգնած: Սեպարատիզմը նրան թուլ չէ տալիս տեղից շարժվել Մինչդեռ ինչքա՞ն է պէտք արդեօք ներկայումս ռամկավար ոյժերի համագործակցութիւնը: Ի՞նչ կարող է անել ռամկավարութիւնը առանց միութեան, որի մէջն է նրա ոյժը: Այդ միութեան խանգարում է աղքալին-կուլտուրական աւտօնօմիան:

Հապա ինչպէս վերացնել աղքերի կուլտուրական բարիքների գլխին կախված գամոկեան սուրբ: Այսպէս են բացանչում այդ սրի ծանրութիւնն զգացողները: Ռամկավարութիւնը այդ մասին մտածել է: Նրա լուծումը ռամկավարութեան ծրագրալին կէտերից մէկն է կազմում, որին մենք այժմ կանցնենք: Իսկ մինչ այդ մի երկու խօսք խառն աւտօնօմիալի մատին:

## V.

Խառն աւտօնօմիան կարող է լինել հողալին ու աղքալին-քաղաքական միացեալ աւտօնօմիալի ձեռք. նա կարող է լինել և հողալին ու աղքալին-կուլտուրական միացեալ աւտօ-

նօմիալի ձեռք. կարող է և այլ կօմբինացիա լինել: Այդ ամեն խառն աւտօնօմիաների մասին մեր առարկութիւնները նոյնն են, ինչ որ արինք մինչև այստեղ մնացեալ աւտօնօմիաների մասին: Միայն նկատենք, որ հողալին ու աղքալին-քաղաքական խառն աւտօնօմիալի պահանջը ընդունել է աւտարիսական ընկերվարական կուսակցութիւնն իր Բրիւննի համագումարում 1899 թւին, որ է.

(1) Աւտարիան պէտք է վերածվի աղքութիւնների ռամկավար միութիւն ներկայացնող պետութեան:

(2) Պատմական թագաժառանդական հողերի փոխարէն պէտք է կաղմակեն աղքալին-ռահմանազմված ինքնավար մարմիններ, որոնցից իւրաքանչիւրում օրէնսդրութիւնն ու զեկը գտնվելու են հուասար, ուղղակի և ընդհանուր ձախնառութեամբ ընտրված աղքալին պալատների ձեռքում:

(3) Միևնուն աղքի ինքնավար նահանգները միասին կազմում են մի-աղքալին միութիւն, որ իր աղքալին գործերը վճռում է միանդաման ինքնօրէն կերպով):

Երեսում է, որ այստեղ կայ ինչպէս հողալին աւտօնօմիա, նոյնպէս և աղքալին-քաղաքական աւտօնօմիա: Մենք մէջ բերինք այս հատուածը ռարարիալորէն ցոլց տալու համար խառն աւտօնօմիալի ընտրմբ:

Այժմ դառնանք ռամկավարութեան աղքալին պահանջներին:

## VI.

Աղքալին պահանջները կը բաւարարվեն միմիայն ընդհանուր Փօնի վրայ: Դա երկրի պետական կաղմի իսկական ռամկավարացումն է:

Եթէ երկրի կարգերը ռամկավարական չեն, ոչ մի աղքալին աւտօնօմիա ընդունակ չէ աղքալին հալածանըներին ընդդիմանալու, այստեղ նա կը մնայ թղթի վրա դրված: Այս ինչ, պետական կաղմի ռամկավարացումը թուրացնում է ամեն

մի հալածանք, ի՛թիւս որոց և աղդալինը: Օրինակ՝ Զվիշեռիան: Այստեղ խուլացին կամ ֆրանսիացին իրանց գրաւթիւնից չեն գանգատվում: իսկ կա՞յ այստեղ աւատօնօմիա: Բայց այնտեղ կալ ֆեղերացիա՝—ուրախութեան ժպիտը, երեսին կը դիմէ մեղ մեր աղդայնականը: Զէ՞ որ ֆեղերացիա կայ և Գերմանիայում, որտեղ լեհերին հալածում են: Հարցը, ուրեմն, ֆեղերացիայում կամ աւատօնօմիայում չէ, այլ պետութեան կտզմի մէջ է. Զվիշերիան ռամէկավարական վայր է, իսկ Գերմանիան բիւրօկրատական պետութիւն:

Միմիան ռամէկավարականութիւնը բաւական չէ, պէտք են և յատուկ («աղդալին») օրէնքներ աղդալին ճնշումների դէմ: Մենք վերեր բերինք ուսւական մարքսիստների ծրագրի 8-րդ կէտը, որ ապահովում է մայրենի լեզուի անձեռնմխելիութիւնը, նոյն այդ կէտը խօսում է և աղդալին դպրոցների մասին: Աւելին: Եթէ կարիք լինի, կենտրոնական ռամէկավար պարլամենտը կը հրատարակէ և յատուկ օրէնքներ աղդալին այս ու այն պէտքի ապահովութեան համար: Ա՞ր ռամէկավարականը դրան կը հակոռակի: Թէ կարիք լինի, ռամէկավար պարլամենտը կը հրատարակի օրէնք, որով ոչ մի աղդի սխաթըրը չի կոռարփի, որով ամեն մի աղդի, ասենք, թատրօն ու դպրոց համեմատական չափով համահաւասար նպաստ կամ մի այլ օգնութիւն կը սաւանան: Այդպէս է ռամէկավարականութեան սկզբունքը, այդպէս էլ պիտի վարչի ու կը վարչի ամեն մի ռամէկավար պետութիւն: Այլ ռամէկավարականութիւն մենք հրաժարվում ենք դաւանելուց:

Իսկ այն իրականացնելու համար պէտք են ոչ թէ զանազան ճրճռան ծրագիրներ զանազան աւատօնօմիաների համար, այլ ռամէկավարութեան ոյժը ու նրա լազմական քայլքը, որ կախված են նրա համերաշխութիւնից, միութիւնից: սրանց ու աղդալին սեպարատիզմի մէջ սարերի և ձորերի տարբերութիւն կար:

Մեր աղդալին ծրագիրն ունի մի այլ կարևոր կէտ և.

դա «լայն տեղական ինքնավարութիւնն» ու «շրջանային ինքնավարութիւնն» է այն տեղերի համար, որ տարբերվում են իրանց առանձնաբառուկ կենցաղական պայմաններով և աղդարնակութեան կաղմով»:

Ինքնավարութիւնը վարչական կարդի մեծութիւն է: Նա նշանակում է կենտրօնի վարչական մարմինների ֆունկցիաների լանձնումը տեղական ընտրութիւններին: Ինքնավարութիւնը վարչական ապակենարօնացում է: Նա րիւրօկրատիզմի վերացում է նշանակում: Սա թող իմանան ֆեղերալիզմի և ապակենարօնացման ոչ այնքան տեղեակ երդուեալ-պաշտառականները:

Ինքնավարութիւնը իսկապէս անմիջական կազ չունի աղդալին ծրագրի հետ, նա աեղական-վարչական նշանակութիւն ունի. աղդալին ինքրին ծոտենում է աւելի շուտ շրջանային աւատօնօմիան (չը խառնել շրջանային ինքնավարութեան հետ): Բայց մենք ցանկութիւն չունենք նրա պահանջն անելու. գուցէ և ժամանակին Ռուսաստանում այդ պահանջը դրացմի:

## VII.

Աղդալին հարցի լուծման կէտերից մէկն է կաղմութ և աղդալին ինքնորոշումը:

Ի՞նչ է նշանակում այս պահանջը, որ շարունակ ու խիստ քննադատութեան է ենթարկվել հասարակական հոսանքների և նրանց գրական ներկայացուցիչների կողմից: Մինչդեռ մեր կարծիքով նա մի ժամանակած, կարևոր պահանջ է մաքսիստական ծրագրում:

Ինչպէս որդէն շեշտեցինք աղդալին հարցը դասակարգալին կուի մի արտայայտութիւնն է, սուր ու խոշը արտայայտութիւններից մէկը: Որքան խորանում ու լայն ժաւակ է ստանում դասակարգալին կոխը, այնքան աղդալին հարցը ցուց է տալիս իր ալիքանդակ կերպարանքը: Ինչպէս տիրող

գասի շարժումը, նոյնպէս և նրա հստական շահերը, ինչպէս նրա կռիւր տիրապետվողների դէմ, նոյնպէս և նրա մի մասի մրցութիւնը միւսի հետ՝ ստիպում է նրան զիմել մի ուժեղ զէնքի—աղքայնականութեան քարողին։ Աղքային միութիւն ազգութեան «Կործանիչների» դէմ, աղքային համախմբում այլ աղքերի՝ իմա նրանց տիրող գաստիարգերի ունձգութիւնների դէմ։ առաջին դէպքում կռիւ իր տանութշնամու դէմ, երկրորդ դէպքում՝ օտար հակառակորդի դէմ։ Եւ նայիօնալիստական խարոյկը պատրաստ է, նրա բոցերը ճարնատում են, որի ներդաշնակութեան տակ աեղի են ունենում քարկոծում, հայածանք, աւար ու սրածութիւն։ Ո՞վ է ալգաեղ տուժողը։ Փողովքդական տարրերը, որի անդիտակից խաւերը ազգային բաղխումների հում նիւթն են կագծում։ Իսկ ի՞նչպէս կարող է նրանց առաջադէմ ու զիտակից մասը, իսկական ռամկավարութիւնն, ալդ ամենի լուռ հանգիստական լինել։ ի՞նչպէս կարող է նա իր ձախնը ըլ բարձրացնել լանուն բռնութեան վերացման, լանուն աղքային խօսքի ցըման։

Աղքային հարցի ամենաարմատական լուծումը ալոր կարող չէ վերջ գնել աղքային ընդհարումներին։ զաստիարգային կռիւ վերացումը կը վերացնէ և իրանով աղքային հարցը։ Դա ապագայ հաստրակակարգի դործը կը լինի։ Իսկ մինչ այդ, աղքային հարցի լուծումը բարենորոշչական կերպարանք է կրում, և մեր նկատողութիւնները այն ժամկետ, թէ Զիլիցերիակում կամ մի այլ տեղ աղքային խլբառումները վերացված են, սոսկ պարևանական նշանակութիւն ունեն։ չը կատ մի վայր, որտեղ աղքային հարցը ապագա թէ աղնպէս իր գլուխը չը բարձրացնի, որովհետեւ չը կաջ մի քաղաքակիրթ երկիր, որտեղ զաստիարգային կռիւ գոյութիւն չունենաբ։ Մեր առաջազրած աղքային ծրագիրն էլ նոյն լատկութիւններով է օժտված։ Եւ այդ է պատճառը, որ մենք աւելի հեռուն ենք զնում, —խօսում ենք աղքութեան ինքնորո-

շումից։ Ամենառամկավար պետութեան ուժնմաններում իսկ մենք կանխատեսում ենք աղքային ճնշում, ուստի այդ պետութեան շեմքին կանգնած աղքային ինքնորոշման բայտարութիւնն ենք անում։

Իւրաքանչիւր աղդ, որ մտնում է մի պետութեան կազմի մէջ, իրաւունք ունի անօրինել իր բաղդը այնպէս, ինչպէս դա իրան ցանկալի է՝ աւտոնօմիալի, ֆեղերացիալի, նոյն իսկ սեպարացիալի միջոցով, որ բղխում է աղքի ինքնիշխանութիւնից։ Բայց դա դեռ չի նշանակում, թէ մենք կարող ենք մեր համակրութեան քուեն տալ աղքի գործադրած ալտ կամ այն միջոցին։ Օրինակ, մենք գնում ենք խղնի ազատութեան պահանջը, բայց դա դեռ չի նշանակում, թէ մենք խրախուսում ենք ալս կամ այն կրօնական դաւանանքը։ Կրօնի և եկեղեցու վերաբերմաժք մենք արտակարտած ունենք մեր տեսուկեալը, նրանից է բղխում և մեր մի պահանջը—գպրոցի անշատումը եկեղեցուց։ Մեր գաղոփարների աղատ զարգացման համար անհրաժեշտ են այն ապահովող սկզբունքները։ Կայ աղքային ճնշում, որ ըստ հնարաւորութեան պէտք է չեղոքացնել, որպէսզի մի աղքութիւն չենթարկվի միւսների եսասէր կամքին, տւելի լաւ է՝ նա յանձինս իր անդամների մեծամասնութեան ունենույ իր ձեռքում մի բանալի, որով ապահոված կը լինի աղքային ճնշումից։ Թո՛ղ նա ի՞նքը տնօրինէ իր վիճակը։ Եթէ նա ալդ տնօրինութիւնը լանձնում է ռամկավար տարրերին, շատ լաւ, իսկ եթէ տնօրինութիւնը կատարվում է ոչ համաձայն ժողովրդական խաւերի սկզբունքներին, այն ժամանակ ապագայում աղքութիւնը թող նաշակէ դրա պտուղները։ Ի հարկէ, գաշտկողների թւում կը լինեն և ժողովրդական տարրերը։ Բայց ի՞նչ արած։ զա երկու չարիքների փոքրագոյնի ընտրութիւնն է, մանաւանդ որ նա կիմիած է ռամկավարութեան կենսական սկզբունքի վրա՝ կռիւ բռնութեան դէմ, քանի որ նա խանգարում է մասսաների շարժման։ Անշուշտ, եթք որ աղքային

ինքնորոշումը ծնում է ֆեղերացիո, թէ սեպարացիա, ռաժ-կալվարութիւնը ցաւօք սրտի հաշտվելով այդ փաստի հետ վայր չէ գնում իր դէնքը։ Նրանց դէմ կը մղի անհաշա կոր։

## VIII.

Ազգային հարցի կատարեալ լուծումը կը տայ մեզ ապա-  
գան։ Խոկ ներկայ ժամանակը ազգային հարցի «լուծման» հա-  
մար տալիս է բարենորոգչական Փօրմուլաներ՝ ինքնորոշում,  
ինքնավարութիւն և մալրենի լեզուի ազատութիւն։ Ազգ-  
պէս է թելողում մեզ Ռուսաստանի արդի գրութիւնը։ Դա  
մեր «հին» ճանապարհն է, «նորն» էլ ալդպէս պէտք է լինի։  
Ոչ մի նոր հով, նոր արածադրութիւն այդ բանին արգելք  
չը պէտք է հանդիսանան, քանի որ ռամկավարութեան  
իդեալները նոյնքան կուռ ու հետևողական են, ինչքան և  
նրա կամքը, որ կովում-կոփում է ժամանակիս իրականու-  
թեան վառ հնոցում։ Յանուն այդ իդեալների մեր լայնատա-  
րած տէրութեան ժողովրդական տարրերի համախմբումը այ-  
սօր աւելի քան անհրաժեշտ է, երբ չօրսդին պատաժ խաւարի  
մէջ նայիօնալիքն ու շօվէն քաղաքանութիւնը խախ-  
նանքի պար են բռնել։ Մաքրել է պէտք այդ մթնոլորտը։

Կայ կատարելու մի մեծ, պատախանատու գործ։ Մա-  
նաւանդ կովկասեան և մասնաւորագէս հայ ռամկավարակա-  
նութեան համար այն երկրի, որտեղ ազգային կորիւները  
պատահան ու հեղձուցիչ կերպարտնք են կրում, այն ժողո-  
վրդի, որի մոռատները տակաւին խարխափում են մթութեան  
մէջ։ Նրանք ևս առաւել գիտակցելու են այս հարցում ամե-  
նաարմատական ու զգօն վարդապետութեան սկզբունքների  
անհրաժեշտութիւնը։

Աւելի ևս մեծ պարտականութիւն կայ դրված և զգու-  
շութիւն ու զգաստութիւն է գահանչվում կովկասեան և  
մասնաւորագէս հայ ռամկավարութեան մաաւորականներից,

որոնք պարտական են լիշելու, որ իրանց ամենից քիչ պա-  
տիւ է բերում ժամանակի տարածերժ հովերով ու տրամա-  
դրութիւններով տարվելու։

1913 թ.,

Մօսկվա.

## Ա.Զ.Ա.ՑԻՆ ՀԱՐՑԻ ՄՈՑԻԿ ԱՆՑԵՍԼԻՑ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ազգային հարցի այժմէականութիւնը ալսօրվալ Ռուսա-  
տանում մեզ սափառում է զիմել նրա անցեալին, որտեղից  
ուսանելի օրինակներ վերցնենք թերեւ ներկալի համար։

Այստեղ մենք կանգ. կառնենք Ռուսաստանում աչքի  
ընկնող միմիայն առցիալ-լեզափախսական կոչված (իրօք՝ կեղծ-  
սացիալիստական) հոսանքների ազգային ծրագիրների վրա։  
Այդ հոսանքներն են՝ ռուսական ս.-ր.-ները, լեհական P. P. S.-ը,  
հրեական սոց. բան. կուսակցութիւնը (կամ. Սերպ և կամ  
սէմիսիաներ), Յ. Յ. Դաշնակցութիւնը, վրացի սոց.-ֆեղերա-  
լիստները և բելօրուսական Գրօմադան։ Նրանց ազգային  
հարցի մասին ունեցած տեսակիտը կարելի է պարզված հա-  
մարել այն կօնֆերանսից յետով, որ տեղի է ունեցել 1907  
թ. ապրիլի 16—20-ին և որին մասնակցել են «իրանց սո-  
ցիալիստական ուղղութեամբ միատեսակ ազգային կուսակ-  
ցութիւնները», ինչպէս այդ խորհրդաժողովի արձանագրու-  
թիւններն են արտայալում. աղապէս՝ նրան մասնակցել են  
վերև թւած ոչ մարքսիստական, հետևարար՝ կեղծ-սոցիալիս-  
տական կազմակերպութիւնները։

Մինք կը զրադկենք ազգային հարցի նրանց տռւած  
գործնական լուծումներով, առանձնապէս ի նկատի չունենա-  
լով այդ խնդրի նրանց տեսական ըմբռնումը։ Վերջինս, ի դէպ  
ասած, մէկ է բոլոր սոց.-լեզ. հոսանքների համար, թէև նրա  
հիմնաւորման իւրաքաչիւր կաղմակերպութիւն մօտենում է  
տարրեր, իւրօրինակ ձեռով. կան և այնպիսիները, ինչպէս  
Յ. Յ. Դաշնակցութիւնը, որ ազգային հարցի վերաբերմամբ

ոչ մի տեսակէտ չունին. չէ որ Դաշնակցութիւնը միշտ էլ զուրկ է եղել և խոյս է տուել տեսական բնոլմ կրող խնդիրներից և բաւականացել է սոսկ ռգործով), ինչպէս սիրում են արտայայտվել նրա անզուգական «թէօրետիկոսները»:

Սոց.-յեղ. հոսանքերն ազգային հարյի լուծումը տեսնում են աւտօնօմիալի մէջ՝ բառի ընդհանուր իմաստով, քանի որ նրանց շարքում կան ֆեզերալիստներ և նոյնիսկ անկախականներ (Р. Р. С.-ը) որպէս աւտօնօմիստներ նրանք բաժանվում են երկու բանակի՝ տերրիտորիալիստ և էկստերրիտորիալիստ։ Առաջինների գլուխն է կանգնած Р. Р. С.-ը, իսկ երկրորդների Սերպը։

Սերպը պաշտպանում է ազգային կամ քաղաքական և կամ տնձնական աւտօնօմիա, որ նշանակում է Ռուսաստանի սահմաններում ապրող իւրաքանչիւր ազգութեան ինքնօրէն կազմակերպումը, անկախ նրա տերրիտորիական դիրքից, յանուն իր («ազգային») իդէական ու նիւթական պէտքերի բաւարարման։ ազգային աւտօնօմիալի ինքնավար մարմիններն են՝ ազգային համանքը, համանքների շրջանալին միութիւնը և բարձրագոյնը՝ ազգային սէլքը։ ազգային աւտօնօմիալի ինստիտուտը ազգութեան՝ այն ընդունող բոլոր անդամների համար պարտադիր է։ Ազգային աւտօնօմիալի էութիւնը պերճախօս կիրառվ փաստաբանված է սերպիստ Մ. Բօրիսօվի կողմից թէ զրականութեան մէջ\*) և թէ սոց.-յեղ. կազմակերպութիւնների լիշված խորհրդաժողովում\*\*): Այդ է էկստերրիտորիալ աւտօնօմիալի կատարեալ տեսակը, թէեւ նրա կողմանիցներն իրանց համարում են (վերջին հաշւով) տերրիտորիալիստ\*\*\*): եւ սա թիւրիմացութիւն չէ, որովհետեւ սերպիստները միենոյն սիօնիստներն են, երէալ ազգայնակ ւններ, որոնց

\*) «С. Е. Р.-П.» Сборник первый М. 1907. № 3—54.

\*\*) «Протоколы Конференции. Росс. Нац.-Соц. Партии». СПБ. 1908. № 40—51.

\*\*\*) Ibidem, № 50.

ձգտումն է անհող երէութեան համար առւետեաց երկիրս գտնել. միայն թէ նրանց սիօնիզմը պաշտօնական սիօնիզմից նրանով է տարրերվում, որ նրանց իդէալն է ոչ թէ իսկական Սիօնը՝ Պաղեստինը, այլ երէութեան տերրիտորիալ կենտրոնացումը. այս հանգամանքը սերպիստներին էլ գործնում է, ի երկէ, ֆաշիստ ամեն տիպի սիօնիստների նման ուսուցիչառ-իւտադիմականներ։ Աւելին չի էլ կարելի սպասել սոցիալիստական ֆրազէօրդիալով բռնված մանր - բռւրժուտիան հոսանքից։

Խորհրդաժողովը մարտական նացիօնալիզմի շարժման հետաքրքրական պատկեր է տալիս մեզ։ Այստեղ Դաշնակցութեան ներկայացուցիչ պ. Թիւնը իր մանկամիտ ճառում լանկարծ պաշտպան է հանդիսանում ազգային աւտօնօմիալի։ Սրմէ լսել նրան։ «Կովկասեան փորձը ցուց տուեց, — ասում է նա, — որ ազգային կազմակերպութիւնները դասակարգալին կուի համար ասպարէզ են ներկայացնում։ Փաստը այն է, որ այն ժամանակի, երբ գպրոցներն ազգային ինքնավարութեան ձեռքում չէին դանշում, դասակարգալին կուիր մթազնված էր, իսկ հայկական գպրոցները ժողովրդի ձեռքը անցնելուց յետոյ այդ կուիր բայտնի չափով սուր կերպարանը ընդունեց։ Էջմիածնի համագումարը բացաբանեց, որ ընարութիւնների ժամանակ դասակարգալին կուիր խորացաւ, որովհետեւ այստեղ հայ պրոլետարիատը պայքարում էր հայկական բուրժուալիզի (գէմ\*)... Ազգային կազմակերպութիւնները ազգային թշնամութիւն չեն լարուցանում... նրանց

\*) Այստեղ ամեն ինչ կեղծած է։ Դաշնակցականը ժառուց է զասակարգային կուից, այն էլ Եղմիածնի կենտրոնական ժողովի նարգում։ Հայ ընթերցում, սիօնիստ և այդ տիպածունակ ժողովը հասկած է եղել ամենից սուազ զասակարգային կուիր թթացնելու, ազգայնական ժողովները ամրազնելու նպատակով։ այնրան ընթաց, այնրան զագանացին միջոցներով. նթէ ուղուց էր, այդ ժողովի ընտրութիւնների միջոցին տեղի ունեցի նուիր ու առաջ էր նկել զաշնակցական մանակի նարուածներից. այն, պրոլետարիատը, նայ գիտակից պրոլետարիատը, մոլոր էր պայքար, թէւ անհամար պայքար, — զա ընդդեմ իսամարտի Դաշնակցութեան էր։

միջոցով վերացվում են ազգերի միջև ժաղած շփումները: Ազգային կուլտուրական միութիւնների բացակայութեան դէպքում, այդ շփումները ուժեղանում են՝ աշակցելով ազգային անշատման զարգացման»\*):

Զարմանալի է, չէ՞ Այն Դաշնակցութիւնը, որ 1905 թ. իր «Նախազժում» տերրիտորիալիստ է հանդիսանում («դաշնակցական ռամկավար հանրապետութիւն Անդրկոմիսի համար», զռեհիաբար ասում է «Նախազիծը, — էջ 13), արդէն 1907 թ. ազգային և ազգային-կուլտուրական աւտոնոմիալի պահանջն է անում: Զարմանալի չէ: Նախ, թէօրիալի վերաբերմամբ դաշնակցականները միշտ էլ երշանիկ անհոգութիւն են ցուց տաել: Երկրորդ, այն ո՞ր թէօրիան է, որ ոյժ ու կարողութիւն կունենալ Դաշնակցութեան Արշակաւանը մտնելու: Երրորդ, Խուսաստանում իւրաքանչիւր «Ճախակողմեան» կազմակերպութիւն, որի կէտ-նպատակն է նացիօնալիզմը, այլ ոչ սոցիալիզմը, այսօր առաջ մղելով ազգային-տերրիտորիալ ծրագիր՝ նրա վիճման դէպքում, վազր նոյնպիսի խանդավառութեամբ փարում է ազգային-էկստերիտորիալ գաղափարին. նպատակը մնում է միևնունը՝ ազգային անշատում, ազգանականի գերիշխանութիւնը միաշազգայինի վրա: Մարդիկ վերշապէս հասկացել են, որ ազգային-տերրիտորիալ ծրագիրները ազգային հարցի լուծման համար անարժէք են. նրանք աւելի շուտ օրէնսդրական-վարչական նշանակութիւն կարող են ունենալ. ազգային հատուածները ցրման պրօցէսն են ապրում այսօր աւելի քան երեսիցէ. օրինակ, ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ հայկական հատուածի համար տերրիտորիալ աւտոնոմիան կամ ֆեդերացիան, քանի որ Կովկասում հայերը միանդամոյն ցիր ու ցան են եղել: Այսպէս, բացի Երևանեան նահանգից, որտեղ հայերը ողջ ազդաբնակութեան 53,16% են կազմում, մնացեալ նահանգներում փոքրամասնութիւն են. Գանձակի նահանգում ողջ ազ-

\*.) Այդ. էջ 59—66.

գաբնակութեան 33,26%, Կաբսի շրջանում — 25,56%, Թիֆլիսի նահանգում — 19%, Բագում — 6,44% և Քութալիսի — 2,27% են կազմում\*):

Այս նկատումներով, երեք բելօրուսական Գրօնադա կոչված մանր բուրժուական կուլտուրաբեղերական հոսանքը — առաջ եկած 1903 թ. Մինսկի, Մօգիլեվի, Վիտեբսկի, Վիլնայի և Գրոդնայի նահանգներում ապրող բելօրուսների մէջ — որ սկիզբներում կողմնակից է եղել արևմտեան վայրի անկախութեան, 1906 թ. իր երկրորդ համագումարում ընդունում է՝ 1) Խուսաստանի համար ֆեդերատիվ հասարակապետութեան ծրագիրը՝ իր բելօրուսական դաշնակից մասով, 2) Բելօրուսիայում ապրող այլ ցեղերի համար ազգային-կուլտուրական աւտոնոմիայի սկզբունքը: Այդ իսկ պատճառուով էլ Խորհրդաժողովում Գրօնադալի ներկայացուցիչը յայտարարել է. «Սոցիալիզմը կեանքի մէջ պէտք է մտնի ազգային միութիւնների միջոցով: Ես արտայալավում եմ... յօդուտ էկստերիտորիալ միութիւնների ազատութեան»\*\*):

Խորհրդաժողովում միշին դիմքն են բռնել վրացի սոց-ֆեդերալիստները, որոնք տերրիտորիալիստ մնալով հանդերձ ոչինչ չեն ունեցել ազգային էկստերիտորիալ միութիւնների դէմ:

Այստեղից անցնում ենք սոց.-լեզ. հոսանքների միւս բանակին, որի առաջապահն է ազգային խնդրում լեհական P. P. S.-ն, այժմ նրա աշ թէկը կամ P. P. S.-ի լեզափոխական Փրակցիա կոչվածը\*\*\*): P. P. S.-ը արտայալաված Փանատիկոս

\*) Բ. Ռշմանին. «Կովկասին ժողովորդների ազգարնակական կազմը ու այլն», Թիֆլիս, 1914, էջ 49.

\*\*) Պրոտոկոլ, էջ 62.

\*\*\*) P. P. S. ծագել է 1892 թ.: Վերջնը 1906 թ. սա բաժանվում է երկու իրավից անշատ և անվայի մասի՝ «աջ» ու «ձախ» թիւերի: «Աջ» շարունակութ է գնալ մայր կուսակցութեան ուղիով, «ձախ» զգուռմանը է ցոյց տալիս յարելու մարքազմեն: Պետական Դումայի անդամ Եազելլօն, որ բազարական Էմլիքներում աշխատուց է Դումայի սոց.-դե նոկրաների ննու, P. P. S. «ձախ» թիւի ներկայացուցիչն է Հանդիպմանը:

տերիտորիալիստ է. նա ձգում է Լեհաստանի անկախութեան և ապագայ անկախ Լեհաստանում ռչլեհերին խռոտանում է տալ ռամկավարական կարգեր: P. P. S.-ի կարծիքով հրէաները, որ Լեհաստանում խոշոր թիւ են կազմում, այստեղ ենթակայ են ձուլման, բացի այդ անմտութիւն է խօսել էկստերիտորիալիզմից, քանի որ աղդալին միութիւնները աղդալին գժառութիւնների դառնուն են բաց անում. հետեւրար, եզրակացնում է P. P. S.-ի ներկալացուցիչը խորհրդաժողովաւմ, սերպիստ զեկուցանողի կողմից առաջադրւած աղդալին սէմքը մի «հանճարեղ զնործ» կարելի է համարել<sup>\*)</sup>:

Սա ապագայ «անկախ» Լեհաստանի տիրող աղդութեան վերաբերմունքն է, ենթակայ ցեղերին, վերաբերմունք, որ արդէն աւանսներ է անում. դա տիրապետվողների շարքում գտնվող և վաղը տիրապետելու լոյսեր ունեցող նացիօնականին է, իր էութեամբ նուանողական, որ համարեա միւնոյն է թէ Պուրիշկեվիչների և Բալաշօվների նացիօնականիում:

Տերրիտորիալիզմի կողմնակից են սոց.-քէվոլիւցիոններները, թէև աւելի մեղմ ու անորոշ տերրիտորիալիզմի. Նրանք դաւանում են աղդալին ինքորոշման ու ֆեդերացիալի սկզբունքները՝ ելակէտ ունենալով իրանց արագէս կոչված ապակենտրօն սոցիալիզմը: Վերջին ժամանակներս նրանցոց ուսունք էկստերիտորիալիզմին են սկսել դիմել արագէս, մի ոմն Գորշեվ կարծում է, որ երկրի կարգերի ռամկավարացման դէպրում իսկ աղդութիւնների կուլուրական շահերը պաշտպանութեան կարու կը լինեն, որովհետեւ տիրող աղդերը փոքրաժամկետ կարու կը լինեն կողմող ցեղերի պէտքերը, կարող է պատահել, որ զանց առնեն<sup>\*\*</sup>). ահա թէ ինչո՞ւ շրջանակին աւտօնօմիալի և ֆեդերացիալի կողքին պէտք է հիմնել «աղ-

<sup>\*)</sup> Պրոտոկոլы, էջ 58—59.

<sup>\*\*)</sup>  Կոլլективность, սբ. ստաց, Մ. 1907, էջ 54.

դալին սէլյմեր»<sup>\*)</sup>): Այս այսպէս լինելով, այնու ամենալիւ սոց լեզափ. ներկայացուցիչը՝ պ. Սիդօրօվ խորհրդաժողովում խօսում է պղպալին աւտօնօմիալի դէմ. լուներ նրան այնպէս, ինչպէս խօսել է նա.

«Հետեւանքում կարող է ստացվել,—ասում է սոց.-լեզ. Սիդօրօվը,—որ մթագնին դասակարգալին կոխւր աղդալին միութիւնների մէջ, որոնք ստիպված են՝ յանուն համազգալին շահերի պաշտպանութեան՝ ի մի միացնել պրոլետարիատը բռնքուազիալի հետ, որ առանց այն էլ բացառիկ դէպքերում, օրինակ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, անխուսափելի է դառնում: Սակայն առ հասարակ աղդալին կազմակերպութիւնների այդօրինակ կղզիացաւմը հազիւ թէ կարող է նպաստաւոր համարվել միջազգալին աշխատաւոր ժողովրդին միացնելու համար: Այսպէս օրինակ, կազմակերպելով կուսակցական արհեստակցական միութիւններ, հայկական Դաշնակցութիւն կուսակցութիւնը ակամալից յարուցանում էր տարբեր պաշտպանված արհեստակցական շահերի հողի վրա աղդալին անտագօնիղմ հալերի, թուրքերի և վրացիների միջև թրփլիսում»<sup>\*\*</sup>):

Չը նախած սրան խորհրդաժողովը աղդալին հարցի մասին ընդունում է մի սրոշում, որի սկզբանքալին մասը «պլանում է», որ փոքրամասնութիւն կազմող էկստերիտորիալ աղդութիւնների աղդալին իրաւունքների վերաբերեալ խնդրի լուծումը չէ կարելի գտնել բացառապէս տերրիտորիալ աւտօնօմիալում ու տեղական ինքնավարութեան մէջ, և որ այդ պատճառով աղդալին հարցի լուծման անհրաժեշտ նախադրեալն է հանդիսանում Ռուսաստանի սահմաններում հասարակա-իրաւական ընաւորութիւն ունեցող աղդալին-ինքնավար էկստերիտորիալ օրգանների կազմակերպումը»<sup>\*\*</sup>):

<sup>\*)</sup> Id., էջ 56.

<sup>\*\*)</sup>  Պրոտոկոլы, էջ. 62—63. ականչը կանչը կաշնակցական «Թէօրէտքառների». լիներ է խօսու սրանց մասին «քոյր կուակցութեան» ներկայացսցից:

<sup>\*\*)</sup>  Պրոտոկոլы, էջ 143—144.

Պարզ է միանգամայն, որ սոց-լեղ. հոսանքների խորհրդաժողովը սրանով առաջ է մղում ազգային աւտօնօմիայի դադարը:

Դա սիօնիզմի յաղթանակն է. ազգային աւտօնօմիան սիօնիստական հրեութեան ցնորամատութիւնն է: Եւ այդ յաղթանակը ամեն անգամ տեղի է ունենում այնտեղ, որտեղ հասարակական շարժումը նացիօնալիստական գոյն է կրում, որտեղ ընտրութիւն է արքում սոցիալիզմի ու նացիօնալիզմի միջև՝ յօդուտ վերջինիս: Նոյն ընտրութիւնն են արել սոց-ինդափոխական կոչված կազմակերպութիւնները Ռուսաստանում:

Այլապէս չեր էլ կարող լինել: Այդ կազմակերպութիւնները բատ իրանց էութեան մանր-բուրժուական են, և բացի ս.-ր.-ներից, նրանք զուտ ազգային ծագում ունեն, հետեւբար՝ նրանք միանգամայն նացիօնալիստ հոսանքներ են: Խորհրդաժողովի արձանադրութիւնները, թէօրեատիկական տեսակէտից, սրաաբաց նացիօնալիզմի թանկագին գոհարներ են տալիս. մարդիկ իրանց տանը և իւրաքինների հետ լինելով փառաբանել են այն նացիօնալիզմը, որը հրապարակում ճարպիկօրէն քողարկում են,

Նացիօնալիզմի ամենաթոյլ արտաքայտիչները ս.-ր.-ներն են. առհասարակ նրանց տեսակէտը ազգային հարցում առտամ և անորոշ է, որ շատ բնորոշ է ս.-ր.-ական իդէօլոգիայի համար. այն ժամանակ, երբ նրանց շարքերը շարժուում են ազգայնական դրօշակի տակ, ս.-ր. պատգամաւորներից մի երկաւուր խորհրդաժողովում միշագգալին և հակազգայնական ֆրազէօլոգիա են բանեցնում:

Р. Р. S.-ի ներկայացուցիչը կարծում է, որ սոցիալիզմը կուլտուրայի գործն է, իսկ կուլտուրան միշտ էլ ազգային է\*): Ուրեմն պէտք է եզրակացնել, որ սոցիալիզմը ազգայնական է: Սխալ և անտեղի համեմատութիւն: Նոյնպիսի խջոկան

\*) Պրոտոկոլ, էջ 16.

զութեամբ կարելի է ասել՝ սոցիալիզմը կապիտալիզմի դորժն է, կապիտալիզմը մասնաւոր-սեփականատիրական է, ապա ուրեմն՝ սոցիալիզմը հիմնած պէտք է լինի մասնաւոր սեփականութեան վրա: Նացիօնալիզմը անհեթեթութիւնից այն կողմք չէ գնացել:

Վրացի իշխանների կուսակցութիւնը, լինելով ու ֆալով «սոցիալիստական», մի բոպէ անգամ չէ մոռանում, որ Թիֆլիսը Վրաստանի մալրաքաղաքն է և ալգպիսին պէտք է լինի յաւիտեան: Սոյց վեղերալիստների ներկայացուցիչը խորհրդաժողովում պնդել է՝ «շատ պատճառներով Թիֆլիզը ամենեւին չէ կարող դուրս մնալ Վրաստանի ինքնօրինութեան սահմաններից»\*):

Նացիօնալիզմի կատարելատիպը տալիս են սերպիստները. պէտք է խոստովանել, որ նրանց գրականութիւնը, մեծ մասմբ նւիրուած ազգային շարժման, նացիօնալիզմի յանդուգն ու բացերես գովքն է անում: Ինչ վերաբերում է խորհրդաժողովավին, Սերպի պատգամաւորներից մէկը այնտեղ հետեւեալ պերճախօս դարձւածքն է շռապել: «Ես չեմ կարող երևակայել որեէ հակամարտութիւն նացիօնալիզմի և սոցիալիզմի միշե ոչ գաղափարում, ոչ ել գէպի այդ գաղափարը տանող շարժման ընթացքում»\*\*): Իսկ սրանից յետոյ ինձ թուում է, թէ հակամարտութիւն չէ կարող գոյութիւն ունենալ և սոցիալիզմի ու անախսեմիտիզմի, և սոցիալիզմի ու բուրժուական կարգերի, և սոցիալիզմի ու շարդերի կամ սոցիալիզմի և ոչ մի բանի միշե...

Հրէական նացիօնալիստներից ետ չեն մնում պանարժենիստները: Հայ մարքսիստական գրականութեան մէջ, որքան մենք գիտենք, բազմից առիթ է եղել պատուելու դաշնակ-

\*) Պրոտոկոլ, էջ 105. Նա զեր ամելի նոռուն է զնացել քար նետելով իր հայ ընկերների պարտէզը: Նա պատմում է, թէ ինչպէս հայ-թուրքական կոտորածների ժամանակ դաշնական երը Թիֆլիսում քանից նախայարժակ են եղել:

\*\*) Ibid., էջ 16.

յականների կեղծ սոցիալիստական վիմակը: Ստկան և այնպէս ձենք չենք կարող զբկել մեղ բաւսկանութիւնից ընթերցողին հաղորդակից դարձնելու Հ. Յ. Դաշնակցութեան պատգամառոր պ. Թիւնի աղքայնամոլ յախտան մտքին, որ այդպարոնք արտայալուել է «սոցիալիստների» կօնֆերանսում — «սոցիալիզմը այսպէս ասած պէտք է աղքայնացւի»\*):

Ի՞նչ ցուցանէ առակս:

Նոցիօնալիստները աւտոնօմիա են պահանջում, որ միանգամայն աւելրդ է այսօրւայ նեռստանում և վիասկակը՝ հետեղական ու գիտակից պրոլետարիատի տեսակէտից:

Իսկ այդ տեսակէտը հականացիօնալիստական ու միջազգային է: Այն դաւանողներից ու պաշտպանողներից նրանք, որոնք կանգնում են աւտոնօմիստական պատւանդանի վրա, վերջին հաշով լարում են նոցիօնալիզմին:

Այս հանգամանքը իմանանք, ճանաչենք ու լսւ լիշենք:

1914 թ.,

Մուսեան

Հ.



\* Պրոտոկոլы, էջ 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0200765

